


«ԼԱՎՈ» ՍՊԸ
ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ ՔՊԼ 17060

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն Ա.Սահակյան

«31» հուլիսի 2024թ.

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 302-24

***«ՀՀ Արմավիրի մարզի «Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի փանիքի վերանորոգման աշխատանքներ» նախագծանախահաշվային փաստաթղթերի***

| | |
|---|---|
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ | ***«Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*** |
| ՆԱԽԱԳԾՈՂ | ***«ՋԻ ԷՄ ԲԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ*** |

***Նախագծման հիմքը՝ Տեխնիկական առաջադրանք***

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի «Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքների աշխատանքային նախագիծը:

Դպրոցի շենքը բաղկացած է ուղղանկյունաձև հատակագծով երկհարկանի յոթ մասնաշենքերից: Նախագծով նախատեսված վերանորոգել միայն մեկ՝ 7-րդ մասնաշենքի տանիքը:

Տանիքը լանջավոր է փայտե ծպեղային համակարգով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ: Տանիքածածկույթը և ծպեղային համակարգը քայքայված են, օդափոխության հորանները դուրս չեն հանված տանիքածածկույթից:

Նախագծով նախատեսված է փայտե ծպեղային համակարգը փոխարինել նոր ծպեղային համակարգով: Նախատեսված է տանիքածածկույթը ամբողջությամբ փոխարինել նոր ցինկապատ թիթեղով ծածկույթով, իրականացնել նոր ջրատարներ և ջրահեռացման խողովակներ:

Նախգծով նախատեսված է նաև մաքրել և հեռացնել տանիքում առկա շինարարական աղբը:

Նախագիծը կատարված է համաձայն առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

## ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի «Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվները կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ նախագծային ծավալների հիման վրա:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. գնահաշվարկով և վերահաշվարկված են 2024թ. գներով ընդունելով 1ռ=2424.50՝ աշխատավարձի մասով, 1ռ=3156.46՝ մեքենա-շահագործման մասով:

Շին. նյութերի արժեքը վերցված է ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2024թ. մայիս ամսվա ինֆորմացիոն տեղեկագրից:

Այն շին.նյութերի, սարքավորումների արժեքները, որոնք բացակայում են ինֆ. տեղեկագրից, կապալառու կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխան հաշիվ ապրանքագրեր:

Նյութերի արժեքների վրա կիրառված է՝

- 6.15% տրանսպորտային ծախսեր,
- 5% նորմերում չնախատեսված այլ նյութերի ծախսեր,
- 2% պահեստավորման ծախսեր:

Ուղղակի ծախսերի վրա տրված է՝

- 13.3% վերադիր ծախսեր,
- 11% շահույթային ծախսեր:

Ըստ հավաք նախահաշիվների լիմիտավորված տոկոսադրույքների, ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է. ***19 322.76 հազ. դրամ***, այդ թվում ԱԱՀ՝ ***3 220.46 հազ. դրամ:*** Ըստ սույն փորձաքննության՝ շինարարության ընդհանուր արժեքը՝ ***19 322.76 հազ. դրամ,*** երաշխավորվում է հաստատման:

## ***ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ***

***«ԼԱՎՈ» ՍՊԸ փորձաքննությունը երաշխավորում է «ՀՀ Արմավիրի մարզի «Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի փանիքի վերանորոգման աշխատանքներ» նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:***

***ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝*** ***Կ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***

***Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ***

«ԼԱՎՈ» "ЛАВО" "LAVO" 02577772